



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԻՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

ՆԵՐԿԱՑ 1887 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն զրբով և նոյն պրոգրամայով: Մէջը ստանում ենք սեփական
ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլ:
Գրվել է «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատան (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարիայի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անդրա և Ազգայնական.
Նախա Եւրոպայից. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ
ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՑԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեծածախ և փոքր-
կան առևտրականութիւնը.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԵՐԿԻՆԱՆՑ մեզ գրում են «Այստեղի Ա. Բ. Բ.
հայ և թ. ջրի մասին քաղաքային դուռնայի կող-
մից կարգադրութիւն է եղել, որ չափվի, խմացվի
ջրովը հողերի քանակութիւնը և այն չափով էլ այդ
հողերից հատուցվի վերջի կապալառու թուրքերից:
Այդ ջրի վրա հսկող նշանակված են եղել մի և
նոյն ժամանակ այստեղից երկու հայ, որոնք 4
—5 ընկերներով մի քանի օր առաջ հսկում են
եղել այդ ջրի վրա. դրանց վրա յարձակվում են մի
քանի թուրքեր, որոնցից մէկը մինչև անգամ հրա-
յան է արձակում, հայերից մէկին սպանելու դի-
տաւորութեամբ, բայց, բարեբաղդաբար, չէ դիպ-
չում. գործ են ածում նոյնպէս և խանչալներ, ո-
րով և վիրաւորում են երկու հայի. հայերը յար-
ձակվում են թուրքերի վրա, խլում են հրացանը՝
ծեծում են նրանց և գալիս յայտնում են ոստի-

կանտանը: Այժմ քննութիւնը շարունակվում է,
բայց տակաւին թուրքերը աղատ չըջում են»

Բաղրի «Կասի» լրագիրը հաղորդում է, որ
վերջին օրերը սաստիկ փոթորիկներ են եղել
կասպից ծովի վրա: Նաեւրից շատերը, որոնք
գալիս էին Պարսկաստանից, ուշացան, իսկ միւս-
ները ամենին չը կարողանալով մոտենալ ափե-
րին, տեղափոխում էին իրանց ճանապարհորդնե-
րին և իրանց բեռները նաւակներով վրա: Այդպէս
արաւ «Նիւսա» չորհուրեւ, որ խնդելից էր գալիս
և չը կարողանալով Բաղրին մոտենալ, նստաց-
րեց նաւակների մէջ ճանապարհորդներին և նոյն
նաւակներին մէջ տեղաւորեց բեռները՝ ափ հասց-
նելու համար: Բայց շարունակվող սաստիկ մրրի-
կի պատճառով նաւակներից երկուսը կործան-
վեցան և 7 հոգի ճանապարհորդներից նաւակների
մէջ դրված բազմով անհետացան կատաղի ա-
լիքների մէջ:

Թիֆլիսի քաղաքային դուռնայի վերջին նիս-
տերից մինում վճռեց այս տարի վարձատրել
քաղաքային վարչութեան մասն ծառայողներին,
նրանցից իւրաքանչիւրին ընծայելով միամուսկա իւ-
րաքանչիւրի ամսական ուժեղին հաւասար գումարը:

«Тифл. Листок» թերթը հաղորդում է, որ յու-
նիսի 4-ին կայացաւ Թիֆլիսի քաղաքային վար-
չութեան մէջ անձուրդ կազմակերպող տալու քաղաքի
լապտերների ֆոտոգրֆով լուսաւորելը: Ամենից

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՈՒԱԾ ՄԱՐԳՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

I.

Մ ա ն կ ա կ ա ն շ ը ջ ա ն ը

Նա իր ծնողաց առաջին և վերջին դասակն էր
Աղա թովմասը քիչ էր մնացել, որ խելքը կորցնէր,
երբ նորածին մանկան առաջին ճնշոցի հետ լսեց
և մի ուրիշ ճնշոց, որի արձակողը տատմէր Նիլ-
սաբէթին էր, չտղայ է, մուշտուղուղ իմն է: Մի
կարմիր տատանոց, իսկոյն դուրս գալով աղա
Թովմասի գրպանից, զիպաւ տատմէր բաջու *):
Ճակատին Ութ օրից յետոյ կատարվեցաւ. նորա-
ծնի մկրտութիւնը: Տէր-Ղազարը ամբողջ նախըն-
թաց գիշերը ու ամբողջ առաւօտը մտածում էր
թէ ինչ արժանաւոր անուն տայ աղա թովմասի
որդուն: Բայց որքան իր չորացած ուղեղը չը յու-
ղեց, քացի Մատթէնից, ուրիշ պատշաճաւոր ա-
նուն չը գտաւ: Այն, այդ անիծած Մատթէնը
ինչքան անսպասելի անբաւականութիւնների պատ-
ճառ դարձաւ:

—Աղա թովմասը այդ օրը հրաւիրել էր բո-
լոր աղագաններին ու հարկաններին և հենց

նոյն րոպէին, երբ փոքրիկ Մատթէնին առօր
փառօր դռնից ներս էին բերում, նա, իր հիւրերի
հետ կանգնած պատշգամբի վրա, մտածում էր
տատմոր ձեռքից առնել մանուկին, համբուրել և
դէպի հանգիստականները դառնալով ասել՝ «հա
աղա Ոսկանը—այս անունն էր մտադիր տալ իր
որդուն,—սիրեցէք և պատուեցէք սորան էլ այն-
պէս, ինչպէս ինձ: Դեռ այս մտքից առաջացած
ժպիտը չէր հեռացել նրա բաւականութեամբ լի
երեսից, երբ նրա ականջի մէջ հնչեցին տատմէր
խօսքերը:

—Աղա, համբուրի՛ր Մատթուս աղին:

—Ի՜նչ Մատթուս, բոլորովին ալլակերպված բա-
ցականչեց աղա թովմասը, և կայծակի արագու-
թեամբ նրա մոքով անցաւ դալլաք *): Մատթուսը,
որը այդ առաւօտեան նրա երեսը սպիրտու ժա-
մանակ քիչ էր մնացել, որ ականջն էլ կտրէր
տակիցը:

—Որդուդ անունն է ինչ, աւելացրեց տատմե-
րը:

—Մատթուս Ութ էր ձեռք սեղ, որ Մատթուս դնէր,
գոչեց աղա թովմասը, նայելով մօտեցող տէր-Ղա-
զարին մի տեսակ ծամածուլած կատաղի դէմքով:
—Կարծես անունը զլիններին կտրվել էր, աւելա-
ցրեց վրդոված աղա թովմասը, անբաւականու-
թեամբ յիշելով, որ ինքը մոռացել էր եկեղեցի
գնալուց առաջ տատմէրին իր ուլած անունը
յայտնելու:

*) Գործիկ:

*) Սպիրիտ:

փոքր զինք առաջարկեց մի ոմն Մէզանդուկով,
այնպէս որ 1.939 լապտերների վրա այժմեանից
քաղաքային վարչութիւնը խնայողութիւն կանի
աւելի քան 1.500 ռուբլի:

Յրանսիական ազգային լուսաւորութեան մի-
նիստութիւնը 1879 թվականին գիտնական հե-
տազօտութիւններ անելու նպատակով ուղարկեց
կովկաս և Միջին-Ասիա Լիւնի մուզէյի փոխ-դի-
րեկտոր յայտնի էրնստ Դանտրին, որի գիտնա-
կան ճանապարհորդութիւնը տեւեց մինչև 1881
թվականը: Պ. Դանտր հաւաքեց գիտնական ար-
ժէք ունեցող մեծ և թանկագին նիւթեր, որոնց
մշակելու և կարգի բերելու համար նա մինչև
այժմ էլ աշխատում է: Յրանսիական ազգային
լուսաւորութեան մինիստրութեան ծախսով պ.
Դանտր սկսում է այժմ հրատարակել իր անտրո-
պօլոգիական հետազօտութիւնները: Դանտր Լիւ-
նում լոյս կը տեսնի, ինչպէս հաղորդում են Պե-
տերբուրգի լրագիրները, պ. Դանտրի աշխատու-
թեան առաջին մասը «Recherches anthropolo-
giques dans le Caucase» վերնագրով: Գիրքը պատ-
կերադարձ կը լինի: Առաջին մասը խօսում է
նախապատմական շրջանի մասին:

ՆԵՐԿԻՆԱՆՑ մեզ գրում են «Թէ ինչ գաղափար
ունի մեր գաւառացի, իրան դարգացած համարող
օրիորդը մայրենի լեզուով խաղաղօգով թատրոնի
վերաբերութեամբ, թէ ինչպէս է վերաբերվում
նա դէպի ամէն մի աղջկանի գործ և հասարակա-
կան երեսից, այդ կարելի է տեսնել այս փոքրիկ
օրինակից: Մի շաբաթ առաջ հայոց ուսումնա-
րանի դահլիճում ներկայացում կար, երբ առա-
ջարկում են տոմարի այդ դարգացած համարվող
օրիորդներին, նրանք հպարտ և ծաղրող դէմքով
պատասխանում են: «Մենք ունենք բաւական
տեղեր դուրսնալու. համար. տուր ձեր տոմ-
սակները վաճառականներին, կամ նրանց կա-
նան և թող նրանք բաւականութիւն ստանան
հայ թատրոնից. մեզ պէտք չէ:» Այդպիսի օրի-
նակները պակաս չեն մեր մէջ. հայ աղջիկը ըս-
տանալով մի փոքր ուսում, իրան լուսաւորված է
համարում. մայրենի լեզուին, թատրոնին այլ ևս
չը հաւանելով, նա դառնում է մի կատարելապէս
անորոշ արարած ոչ բոլորովին նահապետական
անկեղծութիւնը և համեստութիւնը ունենալով, և
ոչ էլ զարգացած մարդու հասկացողութիւնը»:

Տէր-Ղազարը լեղապատառ եղաւ Նրա ուրախ
տրամադրութիւնը մի րօպէի մէջ կորաւ: Աղա
Մատթուս մասին պատրաստած՝ դէպքին պատշա-
ճաւոր մի քանի խօսքերը խեղճի բերանումը մնա-
ցին:

Ութ էր սպասում, որ Մատթէնը այսպիսի մի
մրրիկ կը բարձրացնէր: Այս դէպքից յետոյ միւր-
տութեան հանդէսը բոլորովին խաւարեցաւ: Աղա
Թովմասի զլինից բոլորովին չէր դուրս գալիս
դալլաք Մատթուսը, որը թո՛ւնաւորում էր նրա հո-
գու ուրախ տրամադրութիւնը. հանգիստականներն
էլ, տանտիրոջ երեսին նայելով, լուռ էին. իսկ
տէր Ղազարը խօ բոլորովին ոչնչացած էր.—խեղճը
պատրաստ էր դուրս գալու իր տակը դնել, որ-
պէս զի ազատով թովմաս աղի դժգոհ հայեացք-
ներից, որոնք կարծես ասում լինէին՝ «աղա Մա-
թուս, դալլաք Մատթուս. տէր Ղազար, ասա՛ ար-
քի՛ն: Նմանութիւն գտար ականջ կտրող դալլաք
Մատթուսի ու թովմաս աղի որդու մէջ:» Իրօք,
մեծ և անհերքելի էր տէր-Ղազարի մտքը... Այդ
անաշուղ անունը քիչ էր մնացել թովմաս աղի
սրտից հանէր նրա դէպի իր առաջին և երկրորդ
ուժեղացած սէրը: Բարեբաղդաբար նոյն օրվայ երե-
կոյան թովմաս աղի տրամադրութիւնը դէպի
լուր փոխվեցաւ.—Նա այդ երեկոյան տունը իր
որդուն Ոսկան անունը: Աղա Ոսկան՝ այդպէս
իսկ խեղճ Մատթէնը մնաց միայն տէր Ղազարի
ցուցակում: Մենք էլ մեր աղային դալլաք Մա-
թուսից զանազանելու համար այսուհետև կոչենք

«Կաւկազ» լրագրի պաշտօնական մասում
կարդում ենք, որ Երևանի նահանգական դատա-
րանի պրօկուրօր՝ Ֆրէյդա զա զա զա նշանակված է
Վելիկոլուցկի նահանգական դատարանի պրօկու-
րօր Սիմեիսկի նահանգական դատարանի պրօ-
կուրօր Կոլլէժսկի սովետնիկ Գոռբերտ նշա-
նակված է Երևանի նահանգական դատարանի
պրօկուրօր:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԽՍԻՑ մեզ գրում են «Մայիսի
21-ին, գաւառապետի օրնական պ. Առաքելովի
նախագահութեամբ շինական ժողով կազմեցաւ
տանուտէր ընտրութեան համար: Գաղտնի ջուռ-
արկութեամբ 113 ձայնով նորից տանուտէր ըն-
տրվեցաւ պ. Կոստանդինեանց. միւս կանգնաւոր
ստացաւ միայն 41 ձայն: Պ. Կոստանդինեանց
12 տարի արդէն որ վարում է տանուտէրի պաշ-
տօնը, և այս անգամ հրաժարվում էր ջուռարկ-
վելուց. նա միայն վերջում դիմաւ ժողովրդի ա-
հագին մեծամասնութեան խնդրին: Նա բաւական
համապատասխան է խելացի մարդ է, և իր գործունէու-
թեամբ շատ օգուտներ է տուել Ազգութի հասա-
րակական բոլոր գործերին: Կոստանդինեանց
այս հինգերորդ անգամն է որ յաջորդաբար ըն-
տրվում է այդ պաշտօնի համար»:

ՆԵՐԿԻՆԱՆՑ մեզ գրում են «Այս քանի օրերս
«Կալմա» կոչված աղջկաների մեծ ճանապարհի
վրա երեք թուրք սպանեցին մի հային և միւսին
էլ վիրաւորեցին: Չարագործները ձերբակալված և
բանտարկված են»:

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԽՍԻՑ մեզ գրում են «Մայիսի
25-ից սկսվեցան երկսես. դարոցների հարցաքն-
նութիւնները. քննութիւններին ներկայ են լի-
նում միայն նախկին աւարտած օրիորդները և մի
քանի տիկնիկներ, իսկ աշակերտների ծնողներից՝
համարեա ոչ ոք: Զարմանալի է, որ նոյն իսկ
այն մարդիկ, որոնք սովորութիւն ունեն ամբողջ
տարին խօսել ուսումնարանի մէջ գործողների
դէմ, գէթ քննութիւններին չեն ուզում ներկայ
լինել դպրոցի մասին փոքր ի շատ ճիշդ գաղա-
փար կազմելու համար»:

Ուրբաթ օր, յունիսի 5-ին, տ. Սալմիայի յան-
կարծական տկարութեան պատճառով, իշխան

Ոսկան աղա, որպէս զի աղա թովմասի ոսկորնե-
րը չանհանգստանան գերեզմանի մէջ, որովհետև
նա իր որդու ծննդից չորս տարի յետոյ մեռաւ,
պատուիրելով իր կողակցին, որ չը լինի թէ մի
ոք երբ և իցէ համարձակվի իր որդի Ոսկանին
Մատթուս անունը տալ: Ո՛հ, անիծած դալլաք Մա-
թուսը այդ տրագիկական րօպէում ևս հանգիստ
չը թողեց նրան: Երբեք Մատթուս, աղա Մա-
թուս թո՛ւն, բացականչեց նա վրդովված, կարծես
կամենալով մոռանալ առաջին գոյութիւնը, բայց
հա խաւարի միջից երևում է մի սև ստուեր: Ո՛հ,
սարսափելի տեսիլը—դա դալլաք Մատթուսն է:
Այո, նա է: Ահա աստի՛ ծիծաղը դէմքին, աչքերը
պղտորած, անիւն առաջը կախած կաշուին քը-
սելով, կամաց-կամաց մօտենում է Աղա թովմա-
սը աշխատում է բղաւել, բայց ի դուրս.—կործքը
ճնշում է, կոկորդը հուպ է գալիս՝ ձայն չը կայ:
Իսկ դալլաք Մատթուսը աչքի գրողի պէս արդէն
կանգնած է նրա առաջը, սրած անիւն ձեռ-
քով խաղաղանքով: Նա կուացաւ, կարծես շնչե-
լով աղա թովմասի ականջին.—«դալլաք Մատթուս,
աղա Մատթուս, ինչպէս է, լմա է:» Թովմաս աղի
աչքերը բոլորովին սևացան, շնչառութիւնը բռն-
վեցաւ. նա կարծես զոգաց իր կոկորդի մէջ դալ-
լաք Մատթուսի անիւնի խրվելը.—«խաւար, ցնցվեց
և, ինչպէս ասում են, մեռաւ, որովհետև ոչ
ոք, բայց թովմաս աղից, չը գիտէր, որ նա
սպանվեցաւ. դալլաք Մատթուսից: Մեռաւ թէ ըս-
պանվեցաւ, դա մի և նոյնն է ապրողների համար,
բանը նրանումն է, որ նա թողեց իր որդի Ոսկան

Ստալինական «Мужь знаменитости» պիեսան, որ տրվում էր պ. Լենինյան բեմին, չը ներկայացվեցաւ Վրաս փոխարէն խաղացին մի կամէնդիա, որի վերջնական յետոյ օր. Աննակայի և պ.պ. Լենինյան Դժբախտի մասնակցութեամբ կայացաւ մի դաւէշտ, որի ժամանակ իշխեալ զերստանունին ստացաւ մի շքեղ փունջ:

Յունիսի 6-ին թիֆլիսի կրումակի այգիում, ռուս զերստանունին, տիկին Սափիայի տաղանդի յարգողները, մօտ 100 հոգի, տուեցին նրան մի ծաղկերով: Տիկինը ընծայեցաւ կովկասեան տեսարաններէ մի մեծ ձիթանկար և ներկայացվեցաւ մի ուղեւոր խօսակցեան շատ ճառեր և ճաշը շատ ուրախ անցաւ: Դժբախտի տիկինը յուզված էր երևում և զգացված ծայրով անդադար չնորհակալութիւն էր յայտնում իրան հիւրանկարողներին: Նա անկայեց որ իր կեանքում երբեք մոռանալու չէ յունիսի 6-ի սիրայի ծաղկերովը:

Այս օրերս հասան թիֆլիսի Մօսկովայի համալսարանի երկու պրոֆէսորները՝ Ներսէս Ներսէսեան և Գեորգ Ղաւարեան:

Վերին-Արմիայի մեջ գրում են: «Մի քանի օր սրանց առաջ այստեղ մի երկու պատանի խաղում են եղել միմեանց հետ, զրանցից մէկը ձեռքին ունէր մի բեմովը, որի մէջ ամբարձած են եղել ուրիշ բեմովը: Գնտալները թելովէր բռնողը դուրս է գալիս պարտէզ՝ և ուզում է արձակել բեմովը: Բայց չէ յաջողում, զընտալները մեծ լինելու պատճառով: Ապա նա վերադառնում է սենեակը, և փորձում է գնտալները հանել միջից: Այդ միջոցին դիմացը կանգնած է լինում միւս ընկերը: Գնտալները հանելու ժամանակ, յանկարծ կրակահանը իջնում է, և բեմովը կրակում է:—մի վայրկեանում գնտալի կանգնած ընկերը փռվում է գետնին. գնտալը անցնում է ուղիղ նրա դիմէ: Վերադառնալով մի քանի ժամից յետոյ մեռաւ: Սպանող պատանին հոգեկան ամենատանտանելի դրութեան մէջ է, իր սիրելի ընկերոջ անդիտութեամբ սպանելուն համար: Ոստիկանական քննութիւնը սկսվել է. յոյս ունեն, որ պատանին կարգաբարձի: Մեռնողը այստեղի դարձրել աշակերտ էր՝ Աղա գիւղացի:»

Էջմիածնի (Արարատ) ամառիկը հաղորդում է, որ մայր-տաճարի վերանորոգութեան անհրաժեշտութիւնը զգալով, կաթողիկոսը ապրիլի 19-ից՝ մի կոնգրէսով պատուիրել է Սինօղին կարգադրել ինչ որ պէտք է այդ մասին: Սինօղը որոշեց տաճարի վերանորոգութեան գործը յանձնել Վանական կաթողիկոսին՝ Անդաներին: Դիտութեան համար հարկաւոր ծախքը պէտք է ստացվի Էջմիածնի դանձարանից:

աղին որը չորս տարեկան հասակում, երբ նա հաղիւ սկսել էր ցոյց տալ իր ընդունակութիւնները և իր անկական լեզուով ու գործերով ու բարասցնել թովմաս աղի սիրտը:

Փորթիկ Ոսկանը, ասում են, մի զարմանալի երեխայ էր և խոստանում էր հրաշալի ապագայ: Այս պնդում էր և նրա ծննդի Սառան, անդադար գովելով իր անած աղայի ընդունակութիւնները ու անքնական խելքը: Եթէ Սառա բաշին գիտնար «հանճարեղ» խօսքը, դուցէ ասէր՝ Թէ Ոսկանը հ ա ն ճ ա ր ե ու երեխայ էր: Անա ինչպէս կարծեցաւ այդ կարծիքը, ծննդի տեղով:

Գեռ Ոսկանը մի քանի ամսական էր, երբ թովմաս աղան մի կերակրի օր, իր հիւրերի հետ խօսակցութեան միջոցին, չը գիտեմ ինչու համար, բարկացաւ Մակար պապի վրա, որը այդ ժամանակ փորթիկ Ոսկանին զննելու գրած խաղացնում էր: Յանկարծ, չը գիտեմ հօր բղաւորը եղաւ պատճառը, թէ բնական պահանջը, բայց երկուսն թափեց Մակարի սպիտակահեր գլխին մի տեսակ զեղին հեղուկ, որը սկսեց ծորալ Մակար պապի մազերից ի մեծ դժգոհութեան պատիւ ի մեծ զուարճութիւն աղա թովմասի և հանդիտականների:

—Հասկացաւ զօչողը *) է, հասկացաւ, որ հարկաւոր էր խնամ դնել... հոտալիտ լուրով օժեղ... այ, այ... ծիծաղեց խեղդելով, փորը բռնած ու կուչեկած, խօսում էր թովմաս աղան ու

*) Գաջը:

Յունիսի 5-ին կայացաւ կովկասեան Գիւղանտեսական ընկերութեան ընդհանուր ժողովի նիստը, որը շատ բազմամարդ էր: Անցեալ տարեկան ընդհանուր ժողովում ընկերութեան նախագահ ընտրվեցաւ, ինչպէս հաղորդել ենք, իշխան կառավարչապետը՝ Գեորգիով-Կորսակով: Այս անգամ պէտք է ընտրվէին փոխ-նախագահ, քարտուղար, գանձապահ, և խորհրդի երկու անդամ: Ներսէս Գեորգիով-Կորսակովը ընտրվեցան փոխ-նախագահ՝ Իշի. Զօրջաձէ, քարտուղար՝ պ. խոսեղիանի, գանձապահ՝ պ. Գաղարեանց, խորհրդի անդամներ՝ պ.պ. Խոջայան և Գեորգի: Նախկին փոխ-նախագահ, պ. խոսեղեան, որը հրաժարվեց այդ պաշտօնից, միաձայն ընտրվեցաւ ընկերութեան պատուաւոր անդամ՝ իր 10 տարեկան օգտուէտ գործունէութեան համար յօդուս Գիւղանտեսական ընկերութեան:

Յունիսի 6-ին, երեկոյեան ժամը 8-ին, թիֆլիսից դէպի Թէլէթ տանող ճանապարհի վրա, երեք թուրք տապալներ յարձակվում են մի վրացու վրա, և սաստիկ ծեծելուց յետոյ խլում են նրանից արծաթի զօտին, ժամացոյցը, փողերը և չորերը: Առաջակները չեն գտնված:

Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը վճռել է թիֆլիսի ուսուցչական ինստիտուտում շարունակաբար պահել իր հայրով մի որդեգիր, որը աւարտելուց յետոյ որոշ պայմաններով պէտք է ուսուցչութիւն անի հայոց դպրոցներում: Առաջին անգամ որդեգիր է ընդունված ինստիտուտի աշակերտ Բ. Թադէոսեան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍԻ ԵՒ ԱՌԳԱՆԻՍՏԱՆ

Աւգանիստանում ներքին խռնակութիւնները և պատերազմները սաստկանում են, և ընդհանրապէս Միջին-Ասիայի անապատներում քաղաքական շարժումները և պրօպագանդաները աւելի ու աւելի մեծ չափեր են ընդունում: Աւգանիստանում, Բելուշիստանում և Հնդկաստանի հիւսիսային կողմերում՝ քաղաքական այդ շարժումների աղղղութեան ներքո՝ ահազին պատրաստութիւններ են տեսնվում, որոնցով Մեծ-Բրիտանիայի կառավարութիւնը ուզում է իր համար մի հաստատ հող պատրաստել Միջին-Ասիայում: Վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ նպատակով Անգլիան չէ գաղաւթում գործելու: Իսկ Վիէտամը ռազմագիտական մեծ նշանակութիւն ունի: Երբեք է արդէն, որ այդպիսի կենտրոնականում է անդլիական մեծ զօրը, պատերազմական մեծ պաշար. Պիչինի հովիտում այժմ կայ մինչև 26 հազար զօրը, և դեռ պատրաստու-

ելի քելում: Հանգիստականները նոյնպէս հետևում էին նրան:

Մի ուրիշ դէպք էլ պատահեցաւ գիւղի մէջքի և դատաւորներից մէկի զլլիսն, որոնք աղա թովմասի գիւղացիներից մէկի հետ ունեցած մէծը նրա օգուտի կտրած լինելով, այդ օր հացի էին հրաւիրված աղայի տունը:

Աղա թովմասը պնդում էր, որ անհնազանդ գիւղացիներին, հարկաւոր եղած բաւարարութիւնը ստանալուց յետոյ, պէտք է մի երեք օր էլ ոտնեքը չփախելուց՝ զգած բանտում պահել մի կըտոր հացով ու ջրով: Երբեք զի խելքի գան ու միւս անգամ էլ չը համարձակվին իրանց մեծերի ասածից դուրս գալ և նրանց ուղածը չը կատարել: Մանաւանդ զժգոհութիւն էր յայտնում, որ իր հակառակորդ գիւղացուն բանտը չէին դրել մի շաբաթով:

—Թովմաս աղա, միւր խղճով պէտք է բան բռնել: Քաջալ Գրիգորը մի հացի կարօտ մարդ է. ինչ կը լինէր նրա հալը, եթէ էս կալ ու ցանքն իր տաք ժամանակը մի շաբաթով բանտը դնէին: Առանց էն էլ խելքի վրին մի փուլ յորենի տոկ հինգ փուլ գրինք.—խոտարհարար պատասխանեց մէջքը:

—Հիշա է, այդ էլ նրան շատ է, երկար միւրոքը տոմարացնելով պնդեց դատաւորներից միւրը: Այդ միջոցին Ոսկանը հանդիտա նստած էր իր հօր ծնկների վրա: Թէ ինչ պատահեց նրա հետ, յայտնի չէ, բայց նա կատուի արագութեամբ ցատկեց, հասաւ մէջքին և թըքելով ուղիղ նրա

թիւններ են տեսնվում պահակ զօրքի թիւը մեծացնելու: Այդ դեռ բաւական չէ. անգլիացիք միշտ այն միտքն են յայտնել, որ Միջին-Ասիայի վրա ներգործութիւն ունենալու համար, երկաթուղու գիծը պէտք է անպատճառ հասցնել մինչև Կանդահար, նոյն իսկ մինչև Հիւստո Մեծ-Բրիտանիայի կառավարութիւնը արդէն վճռել է երկաթուղու գիծը հասցնել մինչև Կանդահար, և արդէն հարկաւոր նիւթերը հաւաքված են 100 միոն երկաթուղեան երկաթուղու գիծ անցկացնելու համար: Այս արդէն մի աւելի մեծ քայլ է: Միջին Անգլիան զբաղւում էլ չէ սահմանափակվում կենտրոնական-Ասիայի վերաբերեալ իր քաղաքականութեան մէջ: Բրիտանական կառավարութիւնը, ինչպէս երևում է, ունի իր շատ որոշ հայեցակէտերը Միջին-Ասիայի քաղաքականութեան մէջ, և ամեն միջոց գործ է դնում այդ հայեցակէտերը իրագործելու համար: Հասկանալի է հէնց այդ պատճառով, թէ ինչու աւգանական խնդրին վերաբերեալ բոլոր բանակցութիւնները, որոնք այժմ սկսված են անգլո-ռուսական յանձնաժողովի միջնորդութեամբ՝ այսօր ժամանակում դեռ մի սրտը հետանքի չեն կարողանում համարել:

ՆԱՄԱԿ ՇՎԵՑՍԻՍԻՍԻՍ

Փրնիւ. 20 մայիսի

Նախորդ նամակով հրապարակեան դասախօսութիւնների մասին խօսելիս, յիշել էի նոյնպէս բուն ժողովրդական դասախօսութիւնների հարցի մասին:

Զարգելի ընթերցողը գուցէ զարմանայ, եթէ ասեմ, որ այստեղ ժընդլում, Շվեյցարիայում, ինչպէս և հասարակ եւ արեւմտեան ուրիշ արդիւնաբերական երկրներում, ժողովրդական շունեն ժողովրդական դասախօսութիւններ այնպէս, ինչպէս մենք ենք հասկանում և ցանկալի էր միւր մօտ ունենալ: Եւ այդ շատ պարզ հասկանալի կը լինի, եթէ աչքի առնենք արեւմտեան ժողովրդների կեանքի ներկայ ընթացքը, այն ծայրայեղ երեւոյթները, որոնք դատապարտում են եւրօպացի բանուր ժողովրդին մշտնջենական աշխատանքին:

Զարգացման զօրաւոր օրէնքներով և պատճառներով արեւմտեան ժողովրդների համար ստեղծվել են կեանքի ուրիշ դրութիւն, ուրիշ պահանջներ: Մեր աչքին ներկայանում է հասարակութեան ուրիշ պատկեր, բոլորովին տարբեր սովորութիւններով և ձգտումներով, քան թէ մերը: Արեւմտեանում գործարանական, արդիւնաբերական կեանքը, կապիտալիզմը, զգալի յիպոփոսուութիւն գցեց ժողովրդի կեանքի մէջ և բաժանումն երկու ծայրայեղ հակադիր թշնամի դասակարգերի, այն է՝ պրօլետարիտ և կապիտալիզմ, չունենոր-ստրուկ, ունենոր-ֆեոդալ: Այդ խիտ բաժա-

նջ աչքում, վազեց քրքնջալով և կախ ընկաւ երկարամրուրը դատաւորի միւրեքեց: Ո՛հ, որքան ծիծաղեցին թովմաս աղան ու միւսները: Ասում էին թէ այդ օրից յարգելի դատաւորի մեքեց մի փունջ պակսել էր:

Ոսկանի լալ յատկութիւնները ապացուցանող դէպքերից մէկն էլ այն էր, որ նա մի օր այնպէս պինդ կծեց հարեան աղջիկներից մէկի մատը, որը չը կամեցաւ շաղկապ նրան ման ածել փողոցով, որ սկսեց արիւն գալ: Շատ իր ասածի էր աղան, աւելացնում էր Սառա բաշին այս դէպքը պատմելուց յետոյ:

Թովմաս աղան չը նայելով որ շուտ մեռաւ, բայց այնու ամենայնիւ տեսաւ իր որդու ընդունակութիւնները և զեղեցիկ յատկութիւնները: Նա մեռաւ, համոզված լինելով որ իր որդի Ոսկանը չի արատաւորի նրա անունը.—այսինքն հարկաւոր եղած դէպքերում կարող է հինգ անգամ արժանաւորների զլլանքին ու միւրեքներից, ծնունդից կարող է քաղհան անել, աչքներում թըքել մինչև անգամ չըթի իր պրօլետարի մէջ անել: Քիչ ու պրօլետար մէկ անհետ մասին համաձայն լինել Սառա բաշին հետ գիտաւ է. նա ասում է, թէ Ոսկանը արաւ այդ չորս տարեկան հասակում և ունա ինչպէս.—անցնում էր նոյն փողոցով, ուր խաղում էր Ոսկանը, մի գիւղացի տղայ բողի (պէթի) չուլը մէջքին: «Կանգնիր, արջի քթով», ասաց Ոսկանը.—իսկ գիւղացի տղան չը կանգնեց: Ոսկանը վերցրեց մի մեծ քար ու զցեց գիւղացու վրա՝ Քարը զվալել գնաց ու զիպու-

նումը, անտաղծիկը աւելի ծայրայեղութեան է հասած այնտեղ, ուր գոյութիւն ունի խոշոր արդիւնաբերութիւն, խոշոր կապիտալիզմ, ինչպէս Անգլիայում, Բելգիայում, Իսկ, օրինակ, Շվեյցարիայում, ուր գրեթէ գոյութիւն չունի գործարանական լայն կեանք.—միայն Յիւրիխ կանտոնն է այդ կողմից փոքր ինչ զարգացած—ուր տիրում է մանր արդիւնաբերութիւն, մանր հողատիրութիւն, չենք տեսնում այն ծայրայեղ և այն սարսափելի թշուառութիւնները և յուզմունքները, ինչպէս վերոյիշեալ երկրներում, ինչպէս ներկայումս Բելգիայում, ուր ամբողջ ժողովուրդը ոտի է կանգնել և արիւնալից տեսարան է ներկայացնում...:

Ուրեմն Շվեյցարիայում պահպանվում է մանր, մասնաւոր սեփականատիրութիւն, որի պատճառով այստեղ տեսնում ենք աւելի միջին ժողովուրդ, միջին կապիտալիզմ:

Եւրօպայում, առաւելագէս արդիւնաբերական երկրներում ժողովուրդը այնքան զգալի կերպով որոշ բաժանված է դասակարգերի, ինչպէս բանուր և կապիտալիստ դասակարգերը, որ հեշտ է լինում գիտնալ թէ ով է բուն ժողովրդական ոյժը, տարբեր, ով է կարօտ զարգացման:

Չը խօսեմք ուրիշ արդիւնաբերական երկրի վրա, վերջենք նոյն իսկ Շվեյցարիան, ուր թէև, ինչպէս ասացի, աւելի մանր սեփականատիրութիւն կայ, առաւելագէս չունի անալիս արդիւնաբերութեան, բայց դարձեալ թէ մասամբ էւ վարչական խելացի կազմակերպութեամբ, թէ տեղական մի քանի ազատ հիմնարկութիւնների պատճառով, պատեն է հանդիսանում ծայրայեղութիւն, բուրժուադրայի սաստիկ աճելուն: Եւ այսօր տեսնում ենք մի երկրում, ուր համեմատաբար այնքան շատ բազմազան բանուրների ընկերութիւններ կան, որ չը կան գուցէ որ և է մի ուրիշ երկրում, այժմ այդ բոլոր բանուրական ընկերութիւնները միասնում են և կազմում են համաքաղաքական անունով Շվեյցարիայի ընդհանուր բանուրների զգալի կազմութիւն: Ի՞նչ է ցոյց տալիս կեանքի այս իրական փաստը, որ ամենահաստատ հողի վրա է, այն է տընտեսական միակ հաստատան, դիմացկուն աստառի տակ, առաջ է գալիս մի փոքրիկ երկրում բանուրների համաքաղաքականութիւնը, որ զլսաւորապէս գերմանացի, Ֆրանսիացի, իտալացի երեք ժողովրդների աշխատող ձեռքերը մի կողմ դրած կրօնների, լեզուների տարբերութիւնը և այդպէս աղատվիլով կրօնական, ազգայնական նեղ կղզիացած դիրքը և խիտ առանձնականութիւնից, կապվում են անտեսական շարկապով: Տնտեսական միօրինակ դրութիւն է, նոյն անտեսական պայմաններն և շահերն են, որ միացնում են տարբեր ժողովուրդների բանուր դասակարգը և մի զօրեղ դիրք ստեղծում:

Ընթերցողը երևի արդէն մտածում է թէ ինչ կապ ունեն այս բացատրութիւնները ժողովրդականացում երեսին, խեղճի քիթը տափակեց, իսկ ատամներեց կարծեմ երկուսը փորը թափվեցան: Սառա բաշին հետ համաձայն լինել չէ կարելի մի կէտում, այն է, որ Ոսկանը գիւղացու զբիթը տափակացրել ու «ատամներն էլ փորն է թափել» ոչ թէ չորս տարեկան հասակում, այլ հասակական է, որ եթէ կամ ութ տարեկան հասակում, բայց Սառա բաշին ոչինչ չէ ուզում բնի: Նա անդադար կրկնում է՝ «չորս տարեկան էր, չորս տարեկան էր մեր աղան, երբ գիւղացու քիթը ու պրօլետար մէկ արաւ»: Այնու ամենայնիւ չէ կարելի հաւատալ Սառա բաշին, որովհետեւ, եթէ ընդունելու լինենք, որ աղաները չորս տարեկան հասակից են սկսում գիւղացիների զբիթը տափակացնել ու «ատամները փորն ածել», այն ժամանակ պէտք է և ենթադրենք, որ չը կայ մի գիւղացի, որի քիթը բոլորովին տափակած ու ողջ ատամներն էլ փորը թափված չը լինեն Սառի հարկէ մի անքնական ենթադրութիւն է: Բացի անքնական լինելուց այս ենթադրութիւնը ուղղակի հակասում է այն լուրերին, որոնք ստացվում են գիւղացից: Այդ լուրերից երևում է, որ գիւղացիների մէջ վերջին ժամանակներս շատ են երեւում զբիթաւորներ ու «ատամնաւորներ», որոնց ղոյութիւնը վնասակար համարելով տեղական ոյժերը, այսինքն մէջքները, գլխերը, աղաները, վաշխաւորները, տեղեկները և այլն զբիթ ու պրօլետար զգացնելու մէջ մասնագէտ մարդիկ, աշխատում են ոչնչացնել...:

(Կը շարունակվի)

